Հետազոտական բարեվարքության և էթիկայի քաղաքականության փաստաթղթի առաջարկ

Արուսյակ Ոսկանյան

Անոտացիա

Այս փաստաթուղթը ստեղծվել է «ԴԱՏԱ. տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» ծրագրի շրջանակներում հայտարարված կրթաթոշակի միջոցով։

ԴԱՏԱ ծրագիրն իրականացնում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, «Սոցիես» փորձագիտական կենտրոն հասարակական կազմակերպության, Բուն TV հիմնադրամի, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «ՍՈՍԵ կանանց հիմնահարցեր» հասարակական կազմակերպության հետ միասին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ։

Հատուկ շնորհակալություն Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր Էլինա Ասրիյանին և «Սոցիես» փորձագիտական կենտրոնի անդամներին փաստաթղթի բարելավման աշխատանքներում արժեքավոր ներդրման համար։

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով։ Այստեղ արտահայտված տեսակետները և ներկայացված բովանդակությունը միմիայն հեղինակինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա **2**

Առաջաբանի փոխարեն **4**

Փաստաթղթի մշակման մեթոդաբանությունը **6**

Մաս 1. Հետազոտական էթիկա **7**

Հետազոտական էթիկան բարեվարքության արժեշղթայում 7

Հետազոտական էթիկայի սկզբունքները 9

Մաս 2. Հետազոտողների հետազոտական աշխատանքներում էթիկայի սկզբունքների պահպանման քաղաքականության առաջարկ **12**

Ամփոփիչ առաջարկներ **16**

Հավելված 1 ..... **17**

Գրականություն **18**

Աբստրակտ **20**

Abstract **20**

Առաջաբանի փոխարեն

Վերջին շրջանում աշխարհի առաջատար համալսարանների և հետազոտական կենտրոնների կողմից մշակվել են հետազոտական բարեվարքության և էթիկայի քաղաքականություններ, որոնք ներառում են էթիկական նորմեր և դրանց պահպանման ընթացակարգեր: Հայաստանի պետական բուհերում, որպես այդպիսին, չկա մշակված և կիրառվող հետազոտական (հատկապես հումանիտար և հասարակագիտական բնագավառում) բարեվարքության և էթիկայի քաղաքականություն: Բացակայում են նաև պետական մակարդակի օրենսդրական կարգավորումներ, որոնք կսահմանեին հստակ արժեքներ և ուղենիշներ բուհերում հետազոտողների հետազոտական աշխատանքների էթիկական ասպեկտները վերահսկելու համար:

Արդյունքում, հետազոտական էթիկայի և բարեվարքության սկզբունքների պահպանումը թողնված է կրթական հաստատությունների և դրանց գիտական կենտրոնների պատասխանատվությանը: Չկա մեկ ընդհանուր մոտեցում և/կամ կարգ՝ ուղղված էթիկական նորմերի իրականացմանը և/կամ սկզբունքների պահպանմանը:

Վերջինիս անհրաժեշտությունն առավել քան ակտուալ է հայաստանյան իրականությունում, որտեղ երկարաժամկետ ճգնաժամային պայմաններում հետազոտողներն առնչվում են բազմաթիվ զգայուն թեմաների, խոցելի խմբերի և այնպիսի իրավիճակների հետ, երբ հետազոտողը կանգնում է էթիկական երկընտրանքների կամ դիլեմաների առջև: Այսպիսի իրավիճակներում էթիկայի սկզբունքները հատկապես կենտրոնական դեր են ձեռք բերում:

Այսպիսով,

1) կարևորելով հասարակագիտական հետազոտությունների էթիկական կողմը,
2) արձանագրելով հետազոտական էթիկայի քաղաքականության բացակայությունը,
3) հաշվի առնելով էթիկական սկզբունքների պահպանման մեխանիզմների բացը բուհական կրթությունում՝

այս փաստաթուղթը նպատակ ունի մշակել հետազոտական էթիկայի քաղաքականության առաջարկ՝ ուրվագծելով Երևանի պետական համալսարանի հասարակագիտական ֆակուլտետների հետազոտողների (բակալավրի ուսանողներ, մագիստրոսներ, ասպիրանտներ, ինչպես նաև հետազոտական գործունեության մեջ ներգրավված գիտաշխատողներ) հետազոտական աշխատանքներում էթիկական ստանդարտների կիրառության հնարավորությունները:

Սույն փաստաթուղթը հիմք կհանդիսանա ԵՊՀ հետազոտական էթիկայի կարգի մշակման համար:

Փաստաթղթի երկարաժամկետ նպատակն է ստեղծել բուհական կրթության ենթակառուցվածք, որում կարևորվում և խրախուսվում է էթիկայի նորմերին և սկզբունքներին համապատասխան հետազոտությունների իրականացումը:

Այս փաստաթուղթը հետազոտական բարեվարքության և էթիկայի քաղաքականության առաջարկ է, որը շոշափում է հետազոտական էթիկայի մի շարք նորմեր և դրանց պահպանման ընթացակարգեր: Փաստաթուղթը Հայաստանում հետազոտական բարեվարքության և էթիկայի ինստիտուցիոնալացման առաջին փորձն է: Փաստաթղթի անուղղակի շահառուները հասարակական գիտություններ դասավանդողները, անհատ հետազոտողները և ուսանողներն են,

որոնք զբաղվում են հետազոտությունների ուսուցմամբ, պլանավորմամբ, անցկացմամբ, տվյալների վերլուծությամբ և դրանց հրապարակմամբ։

Փաստաթուղթը կազմված է երկու հիմնական մասից՝

1) հետազոտական էթիկա
2) հետազոտողների հետազոտական աշխատանքներում էթիկայի սկզբունքների պահպանման քաղաքականության առաջարկ։

Փաստաթղթի մշակման մեթոդաբանությունը

Այս փաստաթուղթը ստեղծվել է «Տվյալներ՝ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի միջոցով տրամադրված «Քաղաքականությունների վերլուծության և հետազոտության կրթաթոշակներ» դրամաշնորհային նախագծի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է 2021 թվականի մայիս-նոյեմբեր ամիսներին:

Փաստաթղթի մշակման հիմքում ընկած է որակական մեթոդաբանական ռազմավարությունը:

Փաստաթղթի մշակման համար որպես տեղեկատվության հավաքագրման հիմնական մեթոդ կիրառվել է գրասենյակային հետազոտությունը (desk research):

Գրասենյակային հետազոտությունը ենթադրում է առկա տվյալների երկրորդային վերլուծություն, որը թույլ է տալիս հիմնախնդրի մասին գեներացնել համակարգված տեղեկատվություն: Այս մեթոդի շրջանակներում ուսումնասիրվել են հետազոտական էթիկայի և բարեվարքության ընդունելի սահմանումները և էթիկայի պահպանման միջազգային փորձը:

Սույն փաստաթղթի հիման վրա Երևանի պետական համալսարանի հետ համագործակցությամբ նախատեսվում է ԵՊՀ-ում մշակել և գործարկել հետազոտական էթիկայի կարգ, որի բովանդակության բարելավման և ադապտացման նպատակով կիրառվելու է շահագրգիռ խմբերի հետ մասնակցային գնահատում և մշակված փաստաթղթի փորձարկում:

Մաս 1. Հետազոտական էթիկա

Հետազոտական էթիկան բարեվարքության արժեշղթայում

Հետազոտական էթիկան և բարեվարքությունն աշխարհի տարբեր համալսարաններում և հետազոտական կենտրոններում սկսել են կենտրոնական դիրք զբաղեցնել հետազոտական գործունեություն իրականացնելիս։ Հետազոտական բարեվարքությունը գրեթե նույնությամբ է սահմանվում աշխարհի համալսարանների, հետազոտական կենտրոնների և միությունների կողմից։ Ստորև ներկայացված են բարեվարքության առավել հաճախ հանդիպող սահմանումները։

1. Հետազոտական բարեվարքությունը ենթադրում է կազմակերպել և իրականացնել հետազոտությունն այնպես, որ մարդկանց շրջանում ձևավորվի վստահություն հետազոտության մեթոդների և արդյունքների նկատմամբ։
2. Հետազոտական բարեվարքություն ասելով՝ խոսում ենք հետազոտությունների ազնվորեն, էթիկապես ճշգրիտ և պատասխանատու կերպով նախագծման, անցկացման և հանրայնացման մասին (RMIT University, n.d.)։
3. Բարեվարքությունը ներառում է պարտավորվածություն՝
   3.1. գիտելիք փնտրելու և հասկանալու,
   3.2. հետազոտությունն ազնիվ և էթիկապես իրականացնելու,
   3.3. տվյալները բաց և թափանցիկ տարածելու (Federation University Australia, 2021)։
4. Հետազոտական բարեվարքությունը հետազոտողների վերաբերմունքի և սովորությունների ամբողջություն է, որը հիմնված է էթիկապես ընդունելի և պրոֆեսիոնալ հայեցակարգերի, պարտականությունների և նորմերի վրա (University of Kent, n.d.)։

Էական տարբերություններ չեն նկատվում նաև հետազոտական էթիկայի սահմանումներում, որոնք կիրառվում են աշխարհի համալսարանների և հետազոտական կենտրոնների կողմից։

Ստորև ներկայացված են առավել հեղինակավոր համալսարանների կողմից կիրառվող և առավել հաճախ հանդիպող էթիկայի սահմանումները։

1) Հետազոտական էթիկան հետազոտական գործունեության բարոյական սկզբունքների և ընթացակարգերի ամբողջություն է, որն ուղղված է հետազոտության նախագծման, տվյալների հավաքագրման, հետազոտական արդյունքների մշակման և վերլուծության, արդյունքների ներկայացման և հաղորդակցման գործընթացների պատշաճ կազմակերպմանը (Վերմիշյան Հ. և այլք, 2021)։
2) Հետազոտական էթիկան հայեցակարգ է, որի միջոցով հետազոտական աշխատանքները որակավորվում են որպես լավ կամ վատ, ճիշտ կամ սխալ։ Էթիկան սահմանում է, թե «ինչն է կարելի» և «ինչը չի կարելի», երբ հետազոտությանը մասնակցում են մարդկային սուբյեկտներ (La Trobe University, n.d.)։
3) Հետազոտական էթիկան սկզբունքների և արժեքների ամբողջություն է, որն ուղղված է հետազոտության նախագծման և իրականացման այն ասպեկտներին, որոնք ընկած են հետազոտությանը մասնակցող կամ դրան անմիջական առնչություն ունեցող մարդկային սուբյեկտների նկատմամբ վերաբերմունքի և վարքագծի հիմքում։

Ամփոփելով կարող ենք նշել, որ բարեվարքությունն ընդգրկում է առավել լայն շրջանակներ, իսկ էթիկան՝ առավել նեղ։ Այլ կերպ ասած՝ բարեվարքությունն ի թիվս մնացած բոլոր նորմերի, որոնք ընկած են պատասխանատու հետազոտության անցկացման հիմքում, ներառում է նաև էթիկայի սկզբունքները։ Բարեվարքությունը սահմանում է հետազոտողի արժեքները, իսկ հետազոտական էթիկան՝ նորմերը։

Որպես հետազոտական բարեվարքության և էթիկայի ամենահիմնական և համընդհանուր սկզբունքներ՝ առանձնացվում են հետևյալները.

1) ազնվություն
2) խստապահանջություն
3) թափանցիկություն
4) հարգանք
5) անանունություն/գաղտնիություն։

Բարեվարքության և էթիկայի պահպանումն առանցքային դեր ունի հետազոտությունների անցկացման բոլոր փուլերում։ Սա պայմանավորված է միաժամանակ մի քանի գործոններով.

1) հետազոտության գիտական արժեքի և կիրառելիության բարձրացում,
2) հետազոտողի և/կամ կազմակերպության դրական և պրոֆեսիոնալ կերպարի պահպանում,
3) հետազոտության արդյունքների նկատմամբ հասարակության վստահության ձևավորում,
4) պատասխանատու հետազոտությունների անցկացման պրակտիկաների ստեղծում և պահպանում։

Սոցիալական հետազոտություններն ունեն ոչ միայն տեսական, բացատրական նշանակություն, այլև կիրառական։ Որպես օրինակ՝ դրանք հաճախ կարևոր հիմք են հանդիսանում հանրային քաղաքականությունների մշակման համար։ Այս տեսանկյունից խիստ կևևոր է բարձր որակի հետազոտությունների անցկացումը, որի կարևոր նախապայման է էթիկայի սկզբունքների պահպանումը։

Ընդգծելով հետազոտական բարեվարքության և էթիկայի կարևորությունը՝ դրանց պահպանումն ինստիտուցիոնալացված է մի շարք պետությունների առաջատար համալսարաններում և հետազոտական կենտրոններում։ Հետազոտական բարեվարքության ինստիտուցիոնալիզացումը հիմնականում իրականացվում է մշակված քաղաքականության տեսքով։ Որոշ դեպքերում հետազոտություններում էթիկայի պահպանումը ամրագրված է պետական օրենսդրությամբ։

Հետազոտական բարեվարքության և էթիկայի քաղաքականությունը էթիկայի սկզբունքների և դրանց պահպանման ու վերահսկման մեխանիզմների ամբողջությունն է։ Նշված քաղաքականությունների արդյունքներից է գիտական նորույթ ունեցող, պատասխանատու և որակյալ հետազոտությունների անցկացումը, ինչպես նաև հետազոտության մասնակիցների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգության ապահովումը։

Հետազոտական էթիկայի սկզբունքները

Այս փաստաթղթի էթիկայի սկզբունքների մշակման հիմք է ընտրվել «ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոնի» կողմից մշակված հետազոտական էթիկայի կիրառական ուղեցույցը, որում թվարկված սկզբունքներն առաջարկվում է կիրառել որպես հետազոտությունների էթիկական քննման գործընթացի հիմք։

Սույն փաստաթղթի ստեղծմանը զուգահեռ «ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոնի» կողմից մշակվել և հրապարակվել է հետազոտական էթիկայի կիրառական ուղեցույց (2021), որում ամփոփված են հետազոտական էթիկայի ամենահիմնական և համընդհանուր սկզբունքները և դրանց պահպանման ընթացակարգերը։ Այս ուղեցույցը հետազոտական էթիկան սահմանում է որպես հետազոտական գործունեության բարոյական սկզբունքների և ընթացակարգերի ամբողջություն, որն ուղղված է հետազոտության նախագծման, տվյալների հավաքագրման, հետազոտական արդյունքների մշակման և վերլուծության, արդյունքների ներկայացման և հաղորդակցման գործընթացների պատշաճ կազմակերպմանը։ Ուղեցույցը նաև սահմանում է «**մի՛ վնասիր**» սկզբունքը՝ որպես սոցիալական հետազոտություններում էթիկայի կենտրոնական արժեք, որը ենթադրում է հետազոտողի կողմից թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեբանորեն չվնասել ինչպես հետազոտության մասնակիցներին, նյութերը, տեղեկատվություն պարունակող այլ օբյեկտները և մասնագիտությանը, այնպես էլ ինքն իրեն։

Ելնելով այս փաստաթղթի նպատակից, խնդիրներից և կիրառման շրջանակներից՝ առանձնացվել են հետազոտական էթիկայի սկզբունքները, որոնց պահպանումը կարևոր է հետազոտության պլանավորման, տվյալների հավաքագրման, վերլուծության և հանրայնացման փուլերում։ Պարզ ասած, սույն փաստաթղթով սահմանված էթիկայի պահպանման ընթացակարգերը վերաբերվում են համալսարանի հասարակագիտական ֆակուլտետների հետազոտողների գիտական աշխատանքներին, որոնք էթիկական քննության են ենթարկվում նախքան դաշտային աշխատանքների մեկնարկը, ինչպես նաև հետազոտության տվյալների վերլուծության փուլից հետո՝ հետազոտողի կողմից հաշվետվության տեսքով։

Հետազոտական բարեվարքության և էթիկայի քաղաքականության փաստաթղթի այս հատվածում ամփոփված են էթիկայի կիրառական ուղեցույցում և աշխարհի մի շարք համալսարանների կողմից մշակված բարեվարքության քաղաքականություններում տեղ գտած հիմնական սկզբունքները.

1) **Ազնվություն**

Լինել ազնիվ հետազոտող ենթադրում է հետազոտության մասնակիցներին իրազեկել հետազոտության նպատակի, տվյալների անվտանգության, կիրառելիության, ինչպես նաև հնարավոր իրավական ռիսկերի վերաբերյալ։ Ազնվությունը կարևոր է պահպանել նաև տվյալների հետ աշխատելու ընթացքում։ Մասնավորապես, հետազոտողները չպետք է կեղծեն, հորինեն, խեղյաթուրեն տվյալները, իսկ արդյունքների վերլուծության փուլում, պետք է հղում անել հետազոտության տվյալների, բազաների սկզբնաղբյուրներին՝ հիշատակելով ֆինանսավորման աղբյուրներն ու աջակիցներին և պահպանել մեջբերումների և/կամ հղումների կանոնները։

2) **Հետևողականություն և պատասխանատվություն**

Հետազոտողները պետք է հիմնավորեն հետազոտության նախագծման սկզբունքները և մեթոդաբանությունը և հետազոտության իրականացման փուլում պահպանեն դրանք, խուսափեն շեղումներից, իսկ դրանց արձանագրման պարագայում, ազնվորեն խոստովանեն դրանց մասին՝ հետազոտության արդյունքների ներկայացման փուլում հիմնավորելով դրանց առաջացումը։

3) **Չեզոքություն**

Հիմնախնդրի սահմանման և իրավիճակների նկարագրության ընթացքում պահպանել հետազոտական չեզոքություն: Այսինքն՝ հետազոտության հիմքերը սահմանելիս խուսափել արժեքային համոզմունքներից և «ճիշտ աշխարհի» մասին պատկերացումներից:

4) **Ներառականություն**

Հետազոտության իրականացման փուլում պետք է ազատ և անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն ընձեռել յուրաքանչյուր մասնակցի և/կամ շահագրգիռ կողմի:

5) **Արդարություն**

Արդար վարձատրել հետազոտական աշխատանքներում ներգրավված անհատներին: Հնարավորության դեպքում նաև խրախուսական նվեր տալ հետազոտության մասնակիցներին՝ որպես շնորհակալություն նրանց ժամանակի և տրամադրած տեղեկատվության համար:

6) **Անվտանգություն**

Հետազոտության իրականացման փուլում հետազոտողը պետք է հետևի անվտանգության սկզբունքին՝ ինչպես հետազոտության մասնակիցներին, այնպես էլ ինքն իրեն չվնասելու նպատակով: Մանավորապեսմ, հետազոտողը չպետք է կիրառի այնպիսի տեխնիկա և/կամ ընթացակարգեր, որոնք կարող են հետազոտության մասնակիցներին ֆիզիկական, սոցիալ-տնտեսական և/կամ հոգեբանական վնաս պատճառել: Հետազոտողը պետք է խուսափի իրավական տեսանկյունից խնդրահարույց տեղեկատվության հավաքագրումից:

7) **Անանունություն և/կամ գաղտնիություն**

Հետազոտության իրականացման փուլում պետք է ապահովել տվյալների անանունությունը, իսկ դրա անհնարինության դեպքում պետք է ապահովել տվյալների գաղտնիությունը: Այս սկզբունքի պահպանումը խիստ կարևոր է նաև հետազոտության արդյունքների վերլուծության և ներկայացման փուլերում: Մասնավորապես, պետք է պահպանել տվյալների անանունությունը կամ գաղտնիությունն ապահովող ընթացակարգերը և մեջբերումներ անելիս չկիրառել անձնական տվյալներ և չհրապարակել այդպիսիք: Հետազոտության մասնակցի անձական տեղեկատվությունը ներկայացնել միայն նախնական համաձայնությամբ՝ նախապես քննարկելով, թե ինչը և ինչ չափով կարելի է հրապարակել:

8) **Անհատակենտրոնություն**

Այս սկզբունքի պահպանումը հատկապես կարևոր է հետազոտության դաշտային աշխատանքների իրականացման փուլում: Տվյալների հավաքագրումը սկսելուց առաջ պետք է ստանալ հետազոտվողների նախնական համաձայնությունը՝ բանավոր կամ գրավոր կերպով: Հետազոտության մասնակիցների հետ հաղորդակցվելիս լինել նրբանկատ, համբերատար և պատրաստակամ:

9) **Թափանցիկություն**

Հետազոտության արդյունքների մշակման և վերլուծության փուլում.

- հետազոտության նախագծման և/կամ դաշտային աշխատանքների իրականացման սահմանափակումների/սխալների արդյունքում ծագած, այդ թվում՝ տվյալների հուսալիության և վավերականության խնդիրները չթաքցնել հետազոտության շահագրգիռ կողմերից,

- այլ հետազոտողների և հետազոտության շահագրգիռ կողմերի համար ապահովել հետազոտական անանուն «հում» տվյալների, վերլուծական սխեմաների և ընթացակարգերի հասանելիություն, եթե չկան հակառակը պարտադրող հանգամանքներ (օր.՝ ֆինանսավորողի համապատասխան պահանջ):

Մաս 2. Հետազոտողների հետազոտական աշխատանքներում էթիկայի սկզբունքների պահպանման քաղաքականության առաջարկ

1. **Քաղաքականության նպատակը և կիրառման շրջանակը**

   1.1. Սույն փաստաթղթի նպատակն է ապահովել Երևանի պետական համալսարանի հասարակագիտական ֆակուլտետների հետազոտողների հետազոտական աշխատանքների էթիկայի սկզբունքներին համապատասխանությունը։

   1.2. Փաստաթուղթն իրենից ներկայացնում է վերահսկման և կառավարման կառուցվածք, որը բարենպաստ միջավայր է ստեղծում պատասխանատու, անվտանգ ու էթիկայի նորմերի պահպանմամբ հետազոտությունների անցկացման, ինչպես նաև համալսարանի և հետազոտողների հեղինակության բարձրացման համար։

   1.3. Քաղաքականությունը տարածվում է ԵՊՀ հասարակագիտական ֆակուլտետների հետազոտողների աշխատանքների վրա։

2. **Էթիկայի քաղաքականության գաղափարը**

   2.1. Հետազոտողները պետք է հարգեն մարդկային արժանապատվությունը և չվնասելու սկզբունքը։

   2.2. Հետազոտողները պետք է հարգեն իրենց հետազոտության մասնակիցների անձեռնմխելիությունը, ազատությունը և մասնակցության իրավունքը։

   2.3. Հետազոտողները պետք է խուսափեն բոլոր հնարավոր վնասներից, որ կարող են հասցնել հետազոտության մասնակիցներին նրանց՝ հետազոտությանը մասնակցելու հետևանքով։

3. **Էթիկայի քաղաքականության պահպանմանն ուղղված ընթացակարգ**

   3.1. Ցանկացած հետազոտող պետք է իր հետազոտության ծրագիրն անցկացնի էթիկական քննման գործընթացով։

   3.2. Համալսարանում հետազոտական էթիկայի պահպանումն իրականացվում է եռափուլ գործընթացով

   3.2.1.էթիկական քննման դիմում-հայտի ներկայացում,

   3.2.2. քննող հանձնաժողովի ձևավորում և հայտի քննում,

   3.2.3. եզրակացություն։

4. **Հետազոտողի կողմից էթիկական հայտի ներկայացում**

   4.1. Հետազոտողների գիտական աշխատանքների շրջանակներում իրականացվող հետազոտությունների էթիկական քննման առաջին փուլում հայտատուն պետք է իր ամբիոն ներկայացնի դիմում-հայտ։

   4.2. Դիմումը պետք է ներկայացնել ուսումնական տարվա մեկնարկի առաջին եռամսյակի ընթացքում։

   4.3. Հետազոտության էթիկական քննման հայտի փաթեթը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը.

4.3.1. լրացված հայտադիմում, որը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

4.3.1.1. հետազոտողի անունը, ազգանունը և կուրսը,

4.3.1.2. հետազոտական հարցը/նպատակը և հետազոտության վարկածները, հետազոտության դիզայնի համառոտ նկարագիրը,

4.3.1.3. հետազոտության դաշտային աշխատանքների իրականացման վայրը,

4.3.1.4. հետազոտության մասնակիցների ընտրության տրամաբանությունը՝

4.3.1.4.1. արդյոք հավաքագրվելու է մասնակցի անձը նույնականացնող տեղեկատվություն։ Եթե այո, ինչու՞ և ինչպե՞ս է հավաքագրվելու և պահպանվելու, եթե պահպանվելու է։

4.3.1.5. հետազոտության էթիկական նկատառումների գնահատում՝ մասնավորապես հնարավոր ռիսկերը, որոնց կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն բախվել մասնակիցներն իրենց մասնակցության պատճառով,

4.3.1.6. հետազոտական աշխատանքի գիտական ղեկավարի ստորագրությունը։

4.4. Անհրաժեշտության դեպքում հետազոտության մասնակիցների համաձայնության թերթիկի նախնական տարբերակը։

4.4.1. Համաձայնության թերթիկը պետք է ներառի տեղեկատվություն հետազոտության և դրան մասնակցելու հնարավոր ռիսկերի և առավելությունների վերաբերյալ։

4.4.2. Փաստաթղթում պետք է նշված լինեն հետազոտողի և հետազոտության ղեկավարի կոնտակտային տվյալները։

4.4.3. Պետք է հաշվի առնել, որ 18 տարին չլրացած անձանց փոխարեն հետազոտությանը մասնակցելու գրավոր համաձայնություն պետք է տա նրա ծնողը կամ խնամակալը։

4.5. Տվյալների հավաքագրման գործիքի նախնական տարբերակ։ Գործիքի այս տարբերակը պետք է ընթերցողին փոխանցի հետազոտության հիմնական ուղղվածությունը և շոշափվելիք թեմաները։

4.6. Գործիքում ներառված ձևակերպումները կարող են փոփոխությունների ենթարկվել հետազոտողի կողմից էթիկական հաստատումը ստանալու պահից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխությունները բովանդակային են և ազդում են հետազոտության մեթոդաբանության վրա։

5. Հետազոտողի կողմից ներկայացված հայտի դիտարկում

5.1. Անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը պատրաստելուց հետո հետազոտողը պետք է դիմի իր ամբիոն՝ իր կողմից իրականացվող հետազոտության էթիկական քննման գործընթացը սկսելու նպատակով։

5.2. Եթե անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը տեխնիկապես չի համապատասխանում սահմանված պահանջներին (օրինակ՝ կիսատ է կամ թերի), ապա հետազոտողի դիմումը կարող է մերժվել կամ վերադարձվել լրացման պահանջով։

5.3. Փաստաթղթերի փաթեթի լիարժեք և ժամանակին ներկայացման պարագայում հետազոտողի դիմումն ընդունվում է ամբիոնի աշխատակցի կողմից և փոխանցվում համապատասխան ամբիոնի վարիչին։

6. Հետազոտողի հայտի քննում

6.1. Էթիկական հայտի քննման նպատակով համալսարանի յուրաքանչյուր ֆակուլտետում համապատասխան ամբիոնի վարիչի կողմից ձևավորվում է ժամանակավոր հանձնաժողով: Էթիկայի հանձնաժողովը կազմված է երեք անդամից, որոնցից մեկն ամբիոնի վարիչն է:

6.1.1. Մյուս անդամներից մեկը պետք է լինի ամբիոնում ներգրավված դասախոս, իսկ երրորդ անդամը՝ հետազոտողի գիտական աշխատանքի թեմատիկ ոլորտային մասնագետ:

6.1.2. Հանձնաժողովի նախագահի գործառույթները ստանձնում է ամբիոնի վարիչը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս նաև հայտատուի գիտական աշխատանքի ղեկավարն է: Այդ դեպքում, հանձնաժողովի նախագահի գործառույթները ստանձնում է ամբիոնի ներկայացուցիչ անդամը:

6.1.3. Բոլոր այն դեպքերում, երբ հանձնաժողովի անդամը հետազոտողի գիտական աշխատանքի ղեկավարն է, ամբիոնի վարիչի որոշմամբ նրան փոխարինում է նույն ամբիոնի մեկ այլ ներկայացուցիչ:

6.2. Հանձնաժողովի կողմից հետազոտության էթիկական քննությունը իրականացվում է սույն փաստաթղթում ներկայացված էթիկայի սկզբունքների հիման վրա կազմված գնահատման թերթիկի միջոցով:

6.3. Հետազոտության էթիկական քննման ընթացքում հանձնաժողովը կարող է հետազոտողից պահանջել գրավոր կամ բանավոր կերպով հետազոտության մասին բացատրություններ:

7. Հանձնաժողովի եզրակացություն

7.1. Հանձնաժողովի եզրակացությունը հետազոտողի ավարտական աշխատանքի պաշտպանության նախապայման է: Հետազոտողը կարող է մասնակցել պաշտպանությանը միայն հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

7.2. Հանձնաժողովի կողմից հետազոտության էթիկական քննության ավարտից հետո կազմվող եզրակացությունը կարող է լինել նախնական կամ վերջնական:

7.2.1. Նախնական եզրակացությունը կարող է լինել հաստատման, վերապահումով հաստատման կամ մերժման տեսքով:

7.2.1.1. Հանձնաժողովի հաստատումը մեխանիկորեն դառնում է վերջնական հաստատում և աշխատանքը համարվում է էթիկապես քննության ենթարկված:

7.2.1.2. Հանձնաժողովի մերժումը մեխանիկորեն դառնում է վերջնական մերժում և հետազոտողին թույլ չի տրվում աշխատանքը ներկայացնել պաշտպանության:

7.2.1.3. Վերապահումով հաստատման որոշման դեպքում փաստաթղթերի փաթեթը վերադարձվում է հետազոտողին՝ անհրաժեշտ լրամշակումներ կատարելու և վերջնական եզրակացության ներկայացնելու պահանջով:

7.3. Հետազոտողի կողմից սահմանված ժամկետում լրամշակված փաթեթը հանձնաժողովին ներկայացնելուց հետո իրականացվում է հետազոտության էթիկական քննման երկրորդ

փուլը, որի արդյունքում կազմվում է հանձնաժողովի վերջնական եզրակացությունը՝ հաստատման կամ մերժման տեսքով։

7.4. Ամբիոնի եզրակացությունը չպետք է ներառի առաջարկություններ հետազոտության այլ մասերի վերաբերյալ՝ բացի էթիկական նորմերին համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը։

7.5. Հանձնաժողովի ցանկացած տեսքով վերջնական եզրակացությունը հաստատվում է ամբիոնի եզրակացության հիման վրա ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից։

8. Հետազոտական էթիկայի պահպանման վերահսկումը

8.1. Ամբիոնների կողմից հետազոտության էթիկայի ընթացակարգերի պահպանման վերահսկողական գործառույթն իրականացվում է ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական գծով պրոռեկտորի կամ նրա ենթակայությամբ գործող համապատասխան ստորաբաժանումների կողմից՝ ամբիոնների կողմից կազմված արձանագրությունների հիման վրա։

8.2. Արձանագրությունները պետք է պարունակեն տեղեկատվություն հետազոտողի կողմից իրականացվող հետազոտության էթիկական քննման յուրաքանչյուր փուլի մասին.

8.2.1. հետազոտական էթիկայի քննման հայտի ստացման և դիտարկման մասին արձանագրություն

8.2.2. հանձնաժողովի ձևավորման և կազմի մասին արձանագրություն

8.2.3. հետազոտության էթիկական քննման ընթացքի և եզրակացության մասին արձանագրություն

8.2.4. հանձնաժողովի լուծարման մասին արձանագրություն։

8.3. Ժամանակավոր հանձնաժողովները պարբերաբար հաշվետվություններ պետք է ներկայացնեն համալսարանի պրոռեկտորին։

Ամփոփիչ առաջարկներ

1) Երևանի պետական համալսարանի հասարակագիտական ֆակուլտետների ուսանողների ուսումնական պլանում ներառել հետազոտական բարեվարքության և էթիկայի մասին դասընթաց։
2) Ուսանողների ավարտական աշխատանքների անհրաժեշտ փաստաթղթերի, ավարտական աշխատանքին առաջադրված պահանջների ուղեցույցի մեջ ներառել աշխատանքի էթիկական քննության պահանջի մասին հատվածը՝ որպես ավարտական աշխատանքի պաշտպանության նախապայման։
3) Հետազոտական էթիկայի սկզբունքների պահպանումը ներառել բակալավրի ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների ավարտական աշխատանքների գնահատման չափանիշներում։
4) Երևանի պետական համալսարանը կարող է սույն փաստաթղթի Մաս 2-ի հիման վրա մշակել հետազոտական էթիկայի պահպանման կարգ, որի կառուցվածքի առաջարկը ներկայացված է Հավելված 1-ում։

Հավելված 1

Հետազոտական էթիկայի պահպանման կարգի կառուցվածք.

1. Օգտագործված հապավումներ
2. Ընդհանուր դրույթներ
3. Հետազոտական էթիկայի քաղաքականություն
   3.1. Էթիկայի պահպանման նպատակը և կիրառման շրջանակը
   3.2. Էթիկայի սկզբունքները
   3.3. Էթիկայի պահպանման աշխատանքային խումբ
   3.4. Էթիկայի պահպանման գործընթացը
4. Հետազոտությունների էթիկական քննումը
   4.1. Հետազոտությունների էթիկական քննման նպատակն ու խնդիրները
   4.2. Հետազոտությունների էթիկական քննման փաստաթղթային փաթեթը
   4.3. Էթիկայի հանձնաժողովները
   4.4. Հետազոտությունների էթիկական քննությունը
   4.5. Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը և հաստատումը
   4.6. Էթիկայի հանձնաժողովների աշխատանքի վերահսկողությունը

Հավելված 1. Հետազոտողի դիմում-հայտի կառուցվածք

Հավելված 2. Հետազոտության մասնակցի համաձայնության թերթիկի նմուշ

Գրականություն

Վերմիշյան Հ. և այլք, 2021: *Սոցիալական հետազոտության էթիկական ուղենիշներ*: Սոցիես փորձագիտական կենտրոն, Երևան:. https://socies.am/wp-content/uploads/2021/09/Ethical-guidelines.pdf

American Sociological Association, 2008. *Code of Ethics and Policies and Procedures of the ASA Committee on Professional Ethics.* https://www.asanet.org/sites/default/files/savvy/images/asa/docs/pdf/CodeofEthics.pdf

Australian Research Council, 2021. *Research Integrity Policy*. https://www.arc.gov.au/policies-strategies/strategy/arc-research-integrity-policy

British Sociological Association. *Ethics Guidelines and Collated Resources for Digital Research: Statement of Ethical Practice Annexe*. https://www.britsoc.co.uk/media/24309/bsa_statement_of_ethical_practice_annexe.pdf

British Sociological Association, 2017. *Statement of Ethical Practice.* https://www.britsoc.co.uk/media/24310/bsa_statement_of_ethical_practice.pdf

Federation University Australia (Original Issue: 2010, Current version: 2021). *Research Integrity and Compliance.* https://bit.ly/3vIjNc2

Ghent University. *Research Integrity*. https://www.ugent.be/en/research/research-integrity

La Trobe University. Human Ethics Procedure. https://policies.latrobe.edu.au/document/view.php?id=112&version=1.

Paul de Guchteneire. *Code of conduct social science research UNESCO.* http://www.unesco.org/new/fileadmin/MULTIMEDIA/HQ/SHS/pdf/Soc_Sci_Code.pdf

RMIT University. *Research integrity*. https://bit.ly/3Mo8AEo

Swansea University. *Research Integrity*. https://www.swansea.ac.uk/research/research-integrity-ethics-governance/research-integrity/

The University of Melbourne, 2020. *Research Integrity and Misconduct Policy*. https://policy.unimelb.edu.au/MPF1318

The University of Northampton, 2018. *Research Ethics Code and Procedures*. https://www.northampton.ac.uk/wp-content/uploads/2019/01/research-ethics-code-and-procedures.pdf

University of Kent. *Research Policy and Support: Ethics*. https://research.kent.ac.uk/ris-research-policy-support/ethics/.

University of Limerick, 2019. *Research Integrity Policy*. https://bit.ly/37H0b06

University of Michigan, 2018. *Research integrity*. https://research-compliance.umich.edu/research-integrity

University of Oxford. *Research integrity and ethics policy*.

https://researchsupport.admin.ox.ac.uk/governance/integrity/policy

University of New South Wales, 2019. *Research Integrity Policies and Procedures.* https://www.gs.unsw.edu.au/policy/documents/researchcode.pdf

Աբստրակտ

Սույն փաստաթուղթը հետազոտական էթիկայի քաղաքականության առաջարկ է, որը ուրվագծում է Երևանի պետական համալսարանի հասարակագիտական ֆակուլտետների հետազոտողների հետազոտական աշխատանքներում էթիկական ստանդարտների կիրառության հնարավորությունները: Փաստաթղթի մշակման անհրաժեշտության հիմքում ընկած է հասարակագիտական հետազոտությունների էթիկական կողմի կարևորության ընդգծումը, հետազոտական էթիկայի քաղաքականության բացակայությունը և բուհական կրթությունում էթիկական սկզբունքների պահպանման մեխանիզմների բացը:

Փաստաթղթի երկարաժամկետ նպատակն է ստեղծել բուհական կրթության ենթակառուցվածք, որում կարևորվում և խրախուսվում է էթիկայի նորմերին և սկզբունքներին համապատասխան հետազոտությունների իրականացումը:

Փաստաթղթի մշակման համար որպես տեղեկատվության հավաքագրման հիմնական մեթոդ կիրառվել է գրասենյակային հետազոտությունը (desk research): Այս մեթոդի շրջանակներում ուսումնասիրվել են հետազոտական էթիկայի և բարեվարքության ընդունելի սահմանումները և էթիկայի պահպանման միջազգային փորձը: Գրասենյակային հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել է Հայաստանի բուհական կրթության սկզբունքներին առավել համապատասխանեցված հետազոտական բարեվարքության և էթիկայի քաղաքականության փաստաթուղթ:

Սույն փաստաթղթի հիման վրա Երևանի պետական համալսարանի հետ համագործակցությամբ նախատեսվում է ԵՊՀ-ում մշակել և գործարկել հետազոտական էթիկայի կարգ, որի բովանդակության բարելավման և ադապտացման նպատակով կիրառվելու է շահագրգիռ խմբերի հետ մասնակցային գնահատում և մշակված փաստաթղթի փորձարկում:

Բանալի բառեր. բարեվարքություն, հետազոտական էթիկա, հետազոտություններ, գրասենյակային հետազոտություն, տվյալների հավաքագրում, էթիկայի սկզբունքներ

Abstract

This paper is a research ethics policy proposal that outlines the possibilities of applying ethical standards in the research work of researchers of social science faculties of Yerevan State University. The necessity of developing the paper is based on importance of the ethical aspect of social science research and on absence of a research ethics policy and on gap in the mechanisms for maintaining ethical principles in university education.

The long-term goal of the document is to create an infrastructure of university education in which the conduct of research in accordance with ethical norms and principles is emphasized and encouraged.

Desk research was used as the main method of information collection for the development of the paper. Using this method were studied acceptable definitions of research ethics and benevolence and the international experience of ethical compliance. Based on the results of the desk research, a research ethics and research ethics policy document was developed, which is more in line with the principles of university education in Armenia.

Based on this policy paper, in cooperation with Yerevan State University, it is planned to develop and launch a research ethics policy at YSU, in order to improve and adapt its content, participatory evaluation with interested groups and testing of the developed document will be used.

Keywords: ethics, research ethics, research, desk research, data collection, ethics principles